ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.03.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-03/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-03/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Գնումներ աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.02.2014թ. և «ՍՊ» ՍՊԸ-ի 26.02.2014թ. և 03.03.2014թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքները, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-03/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «ՍՊ» ՍՊԸ-ն 06.02.2014թ. ժամը 10:02-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Կենտրոն) թեժ գծին և հայտնել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների ձեռքբերման նպատակով, 2013թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթ (այսուհետև՝ նաև Մրցույթ), որի արդյունքում ծրարների բացման նիստը կայացել է 2014թ. հունվարի 14-ին:

Մրցույթի հրավերով սահմանվել է, որ Մրցույթի մասնակիցների կողմից պետք է ներկայացվի ապրանքատեսակի համապատասխանության ծագման և որակի սերտիֆիկատ: «ՀԷՑ» ՓԲԸ-ում 2014թ. հունվարի 14-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ընթացքում Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված

առաջարկների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մրցութի մասնակից «Սակկաբել» ԲԸ-ի ներկայացրած առաջարկում բացակայում է մրցույթի պայմաններին բավարարող պարտադիր փաստաթղթեր, որից հետո մրցույթային հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել մինչև 16.01.2014թ. ժամը 17:00-ն ժամանակ տրամադրել «Սակկաբել» ԲԸ-ին՝ պահանջվող փաստաթղթերը համալրելու նպատակով, ինչպես նաև ձևավորել տեխնիկական մասնագիտական խումբ՝ վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության համար:

Վերը նշված մրցութային փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով, Հանձնաժողովի հաջորդ նիստ է հրավիրվել 30.01.2014թ., որի ընթացքում Հանձնաժողովը, ամփոփելով մասնակիցների կողմից մատակարարվող նյութերի և ապրանքների տեխնիկական առաջարկները, հայտարարել է, որ մրցույթի մասնակից «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել են մատակարարվող նյութերի որակի համապատասխանության սերտիֆիկատները, որոնք բացակայում էին նույն մրցույթով նախատեսված առաջին նիստի ընթացքում:

Նշված նիստի ընացքում, սակայն, պարզ է դարձել, որ որակի համապատասխանության սերտիֆիկատը «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել է 28.01.2014թ., այսինքն մրցույթի Հանձնաժողովի կողմից տրված ժամկետի խախտմամբ:

Բացի այդ, «ՍՊ» ՍՊԸ-ն նշել է, որ մրցույթի հրավերով նախատեսվել է մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջները, որի համաձայն մրցութային հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով, մինչդեռ «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել է այլ արժույթով:

«ՍՊ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև մրցույթի հրավերով սահմանված արժույթի ներկայացման պահանջները՝ խնդրելով դադարեցնել Մրցույթի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասերով Մրցույթի հանձնաժողովի «Սակկաբել» ԲԸ-ի 28.01.2014թ. ներկայացրած ապրանքատեսակի համապատասխանության ծագման և որակի սերտիֆիկատը՝ որպես Մրցույթի պայմաններին բավարարող փաստաթուղթ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն հայտնել է, որ 14.12.2013թ. Ընկերության կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար

ամրանների և գործարքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի (այսուհետև՝ նաև Մրցույթ) ընթացքում հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, ապահովել է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև ցանկացած անձի համար գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների առավել արդյունավետ իրականացումը:

«ՀԷՑ» ՓԲԸ-ն հայտնել է, որ Հանձնաժողովը չի ունեցել որևէ օբյեկտիվ և հիմնավոր պատճառ մերժելու «Սակաբբել» ԲԸ-ի կողմից ներկայացված մրցութային հայտի ընդունումը, և Մրցույթն անց է կացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության կողմից 10.02.2011թ. ընդունված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության պահանջներին համապատասխան:

Գնումների աջակցման կենտրոնում ս.թ. փետրվարի 12-ին ժամը 11:00-ին կազմակերպված քննարկման ընթացքում, «ՍՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտարարեց, որ «ՍՊ» ՍՊԸ-ն հրաժարվում է Կենտրոնի թեժ գծին 06.02.2014թ. ժամը 10:02-ին ահազանգով Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված պահանջից և պնդում բացառապես 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված պահանջը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:
- 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի կողմից 2008թ. N 7/08-ՀՄ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ

անցկացնելու կարգի մասին կանոնադրության (այսուհետև նաև՝ Կանոնադրություն) 8.2.2.3 կետի համաձայն՝ մրցութային փաստաթղթերը պետք է պարունակեն՝

գ. մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները և այդ պահանջներին համապատասխանության հաստատման կարգին ներկայացվող պահանջները,

ը. մրցութային հայտի կազմում ներկայացվող փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման վերաբերյալ հրահանգները;

Կանոնադրության 8.2.8.6 կետի համաձայն՝ նախընտրական փուլի շրջանակներում գնահատումն իրականացվում է մրցութային փաստաթղթերում նշված չափանիշների և ընթացակարգերի հետ խիստ համապատասխանությամբ:

Կանոնադրության 8.2.9.2 կետի համաձայն՝ Մրցույթի կազմակերպիչը իրավասու է մերժել բոլոր մրցութային հայտերը, եթե դրանցից ոչ մեկը չի բավարարում մրցույթի մասնակցի, արտադրանքի, պայմանագրի պայմանների և հայտի ձևակերպման վերաբերյալ պահանջներին:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի մրցութային փաստաթղթերի՝

- 2.4.4 կետի համաձայն՝ մրցութային հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով, բացառությամբ.

Այն փաստաթղթերը, որոնց բնօրինակները մրցույթի մասնակցին են տրվել երրորդ անձանց կողմից և որոնցում դրամական միջոցների գումարը արտահայտված է այլ արժույթով, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով՝ պայմանով, որ տվյալ փաստաթղթերին կկցվեն մեկնաբանություններ՝ տվյալ գումարները հայկական դրամի փոխարկման մասին՝ ելնելով արժույթի պաշտոնական կուրսից, որը սահմանվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, նշելով նման կուրսը և դրա սահմանման ամսաթիվը, հակառակ դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մերժել մրցութային հայտը:

- 2.8.2 կետի համաձայն՝ ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի Մասնակցից պահանջել իրենց Մրցութային հայտերի վերաբերյալ բացատրություններ կամ լրացումներ, այդ թվում բացակայող պարզաբանող փաստաթղթերի ներկայացում: Ընդ որում Մրցութային հանձնաժողովը իրավունք չունի

պահանջել բացատրություններ կամ լրացումներ, որոնք փոխում են Մրցութային հայտի էությունը:

Ընտրական փուլի արդյունքներով Մրցութային հանձնաժողովը մերժում է մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված Մրցութային հայտերը, որոնք չեն ներկայացրել նույն մրցութային փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը կամ ներկայացված փաստաթղթերում կան Մրցույթի մասնակցի մասին անարժանահավատ կամ թերի տեղեկություններ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը գտնում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 50-րդ հոդվածի 2-րդ մասով, Կանոնադրության 8.2.8.6 և 8.2.9.2 կետերով և մրցութային փաստաթղթերի 2.8.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Սակկաբել» ԲԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը:

2. «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքով «ՍՊ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների ձեռքբերման նպատակով, 2013թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթ, որի արդյունքում ծրարների բացման նիստը կայացել է 2014թ. հունվարի 14-ին:

Մրցույթին մասնակցելու նպատակով առաջարկ ներկայացրած մասնակիցների թվում է եղել նաև «ՍՊ» ՍՊԸ-ն:

Մրցույթի փաստաթղթերով, մասնավորապես մրցույթի հրավերի հավելված N 2-ի 6.1.6 կետով սահմանվել է, որ Մրցույթի մասնակիցների կողմից պիտի ներկայացվի ապրանքատեսակի համապատասխանության ծագման և որակի սերտիֆիկատ:

«ՀԷՑ» ՓԲԸ-ում 2014թ. հունվարի 14-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ընթացքում մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկների

ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մրցույթի մի քանի մասնակիցների, այդ թվում նաև «Սակկաբել» ԲԸ-ի ներկայացրած առաջարկում բացակայում է մրցույթի պայմաններին բավարարող պարտադիր փաստաթղթեր, որից հետո մրցութային հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել, մինչև 16.01.2014թ. ժամը 17:00-ն, ժամանակ տրամադրել բոլոր այն մասնակիցներին, որոնց ներկայացված մրցութային փաթեթները թերի են, պահանջվող փաստաթղթերը համալրելու նպատակով, ինչպես նաև ձևավորել տեխնիկական մասնագիտական խումբ՝ վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության համար:

Վերը նշված մրցութային փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով, Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվեց 30.01.2014թ.:

«ՀԷՑ» ՓԲԸ-ում 2014թ. հունվարի 30-ին կայացած երկրորդ նիստի ընթացքում, Հանձնաժողովը՝ ամփոփելով մասնակիցների կողմից մատակարարվող նյութերի և ապրանքների տեխնիկական առաջարկները, հայտարարեց, որ մրցույթի մասնակից կազմակերպությունների կողմից հիմնականում բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են, մասնավորապես «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել են մատակարարվող նյութերի որակի համապատասխանության սերտիֆիկատները, որոնք բացակայում էին նույն մրցույթով նախատեսված առաջին նիստի ընթացքում:

Նշված նիստի ընթացքում, սակայն պարզ դարձավ, որ որակի որ որակի համապատասխանության սերտիֆիկատները «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել են 28.01.2014թ., այսինքն մրցույթի Հանձնաժողովի կողմից տրված ժամկետի խախտմամբ, որի արդյունքում գտնում են, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, քանի որ նշված կետով սահմանված է, որ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Բացի այդ, «ՍՊ» ՍՊԸ-ն հարկ է համարում նշել նաև, որ մրցույթի հրավերի 2.4.4 կետով նախատեսվել է մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջները, որի համաձայն մրցութային հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց բնօրինակները մրցույթի մասնակցին են տրվել երրորդ անձանց կողմից և որոնցում դրամական միջոցների գումարը արտահայտված է այլ արժույթով, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով՝ պայմանով, որ տվյալ փաստաթղթերին կկցվեն մեկնաբանություններ՝ տվյալ գումարները հայկական դրամի փոխարկման մասին՝

ելնելով արժույթի պաշտոնական կուրսից, որը սահմանվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, նշելով նման կուրսը և դրա սահմանման ամսաթիվը, հակառակ դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մերժել մրցութային հայտը:

«ՍՊ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի հրավերի 2.4.4 կետով նախատեսված պահանջը:

«ՍՊ» ՍՊԸ-ն խնդրել է մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով կասեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Սակկաբել» ԲԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ որոշման կայացումը և դադարեցնել Մրցույթի հանձնաժողովի կողմից «Սակկաբել» ԲԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը:

«ՍՊ» ՍՊԸ-ն 03.03.2014թ. ի լրումն 26.02.2014թ. ներկայացված բողոքի հայտնել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների ձեռքբերման նպատակով, 2013թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի ընթացքում հանձնաժողովը գնահատելով «Սակկաբել» ԲԸ-ի կողմից Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը, որը ներկայացված է եղել ԱՄՆ դոլարով, կիրառել է մրցույթի փաստաթղթերում և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի կողմից 2008թ. N 7/08-ՀՄ որոշմամբ հաստատված կանոնադրությամբ չներառված և «ՍՊ» ՍՊԸ-ի համար անհասկանալի բանաձև, որի արդյունքում «Սակկաբել» ԲԸ-ն տվյալ չափաբաժնի մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

«ՍՊ» ՍՊԸ-ն կարծում է, որ Մրցույթի հանձնաժողովի կողմից «Սակկաբել» ԲԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկի որոշակի բանաձևի կիրառմամբ զուգորդված գնահատումն իրականացվել է խտրական հիմունքներով՝ ընկերության համար ստեղծելով անհավասար պայմաններ:

«ՍՊ» ՍՊԸ-ն գտնում է, որ նշված գնահատման արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, քանի որ նշված կետով սահմանված է, որ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Ելնելով վերը նշված հանգամանքից՝ «ՍՊ» ՍՊԸ-ն բողոքը քննող հանձնաժողովին խնդրում է դադարեցնել Մրցույթի հանձնաժողովի «Սակկաբել» ԲԸ-ի հայտը Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատելու որոշումը:

3. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 17.02.2014թ. N 04/032-250 և 27.02.2014թ. N 04/032-372 գրություններով դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ Գնումների բողոքարկման խորհրդում 13.02.2014թ. Գնումների աջակցման կենտրոնի և 26.02.2014թ. «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ, սակայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից պատասխան չի ներկայացվել:

4. ԳԲԽ-03/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել «Գնումներ աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.02.2014թ. և «ՍՊ» ՍՊԸ-ի 26.02.2014թ. և 03.03.2014թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքները բավարարել՝ դադարեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Սակկաբել» ԲԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը:

5. ԳԲԽ-03/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-03/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է 13.02.2014թ. Գնումների բողոքարկման խորհրդին և «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2014թ. և 03.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքները, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի հրավերը,

գնահատող հանձնաժողովի 14.01.2014թ. N 1 արձանագրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների ձեռքբերման նպատակով, 2013թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ են ներկայացրել «ՍՊ» ՍՊԸ-ն և «Սակկաբել» ԲԸ-ն:

«ՍՊ» ՍՊԸ-ն 06.02.2014թ. ժամը 10:02-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված Մրցույթի հրավերով սահմանվել է, որ Մրցույթի մասնակիցների կողմից պետք է ներկայացվի ապրանքատեսակի համապատասխանության ծագման և որակի սերտիֆիկատ: «ՀԷՑ» ՓԲԸ-ում 2014թ. հունվարի 14-ին ժամը 11:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի ընթացքում մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մրցույթի մասնակից «Սակկաբել» ԲԸ-ի ներկայացրած առաջարկում բացակայում է մրցույթի պայմաններին բավարարող պարտադիր փաստաթղթեր, որից հետո մրցութային հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել, մինչև 16.01.2014թ. ժամը 17:00-ն, ժամանակ տրամադրել «Սակկաբել» ԲԸ-ին, պահանջվող փաստաթղթերը համալրելու նպատակով, ինչպես նաև ձևավորել տեխնիկական մասնագիտական խումբ՝ վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության համար:

Վերը նշված մրցութային փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվել է 30.01.2014թ., որի ընթացքում, Հանձնաժողովը, ամփոփելով մասնակիցների կողմից մատակարարվող նյութերի և ապրանքների տեխնիկական առաջարկները, հայտարարել է, որ մրցույթի մասնակից «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել են մատակարարվող նյութերի որակի համապատասխանության սերտիֆիկատները, որոնք բացակայում էին նույն մրցույթով նախատեսված առաջին նիստի ընթացքում:

Նշված նիստի ընացքում, սակայն, պարզ է դարձել, որ որակի համապատասխանության սերտիֆիկատը «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել է 28.01.2014թ., այսինքն մրցույթի Հանձնաժողովի կողմից տրված ժամկետի խախտմամբ (ժամկետը տրվել էր մինչև 16.01.2014թ. ժամը 17:00-ը):

Բացի այդ, «ՍՊ» ՍՊԸ-ն նշել է, որ մրցույթի հրավերով նախատեսվել է մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջները, որի համաձայն մրցութային հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով, մինչդեռ «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել է այլ արժույթով:

«ՍՊ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև մրցույթի հրավերով սահմանված արժույթի ներկայացման պահանջները՝ խնդրելով դադարեցնել Մրցույթի 1-ին և 4-րդ չափաբաժինների մասերով Մրցույթի հանձնաժողովի «Սակկաբել» ԲԸ-ի 28.01.2014թ. ներկայացրած ապրանքատեսակի համապատասխանության ծագման և որակի սերտիֆիկատը՝ որպես Մրցույթի պայմաններին բավարարող փաստաթուղթ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը:

Կենտրոնը 06.02.2014թ. էլեկտրոնային նամակով դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 06.02.2014թ. ժամը 10:02-ին ստացված ահազանգի վերաբերյալ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ հայտնել է, որ 14.12.2013թ. «ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի ընթացքում հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, ապահովել է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև ցանկացած անձի համար գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների առավել արդյունավետ իրականացումը:

«ՀԷՑ» ՓԲԸ-ն հայտնել է, որ Հանձնաժողովը չի ունեցել որևէ օբյեկտիվ և հիմնավոր պատճառ մերժելու «Սակաբբել» ԲԸ-ի կողմից ներկայացված մրցութային հայտի ընդունումը, և Մրցույթն անց է կացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության կողմից 10.02.2011թ. ընդունված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների,

աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության պահանջներին համապատասխան:

Գնումների աջակցման կենտրոնում ս.թ. փետրվարի 12-ին ժամը 11:00-ին կազմակերպված քննարկման ընթացքում, «ՍՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտարարեց, որ «ՍՊ» ՍՊԸ-ն հրաժարվում է Կենտրոնի թեժ գծին 06.02.2014թ. ժամը 10:02-ին ահազանգով Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված պահանջից և պնդում բացառապես 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված պահանջը, իսկ «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներից, Կենտրոնի կողմից ուսումնասիրություն կատարելու նպատակով, պահանջվեց ներկայացնել Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հաջորդ քննարկումը նշանակվեց 2014թ. փետրվարի 13-ին ժամը 16:00-ին:

Կենտրոնում 13.02.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ընթացքում «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների կողմից Կենտրոնի կողմից պահանջված որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

Կենտրոնը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 137-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ 13.02.2013թ. բողոքարկման գործընթաց է նախաձեռնել Գնումների բողոքարկման խորհրդում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «ՍՊ» ՍՊԸ-ն 06.02.2014թ. ժամը 10:02-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների ձեռքբերման նպատակով, 2013թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթ, որի ընթացքում մասնակիցների կողմից ներկայացված առաջարկների ուսումնասիրությամբ պարզվել է, որ մրցույթի մասնակից «Սակկաբել» ԲԸ-ի ներկայացրած առաջարկում բացակայում է մրցույթի պայմաններին բավարարող պարտադիր փաստաթղթեր, որից հետո մրցութային հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել, մինչև 16.01.2014թ. ժամը 17:00-ն, ժամանակ տրամադրել «Սակկաբել» ԲԸ-ին, պահանջվող փաստաթղթերը համալրելու նպատակով:

Վերը նշված մրցութային փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով, Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվել է 30.01.2014թ., որի ընթացքում պարզ է դարձել,

որ որակի համապատասխանության սերտիֆիկատը «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել է 28.01.2014թ., այսինքն մրցույթի Հանձնաժողովի կողմից տրված ժամկետի խախտմամբ, սակայն Մրցույթի հանձնաժողովի կողմից այն ընդունվել է:

Բացի այդ, «ՍՊ» ՍՊԸ-ն նշել է, որ մրցույթի հրավերով նախատեսվել է մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջները, որի համաձայն մրցութային հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով, մինչդեռ «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացվել է այլ արժույթով:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ Կենտրոնը Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Սակկաբել» ԲԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը:

Կենտրոնը Գնումների բողոքարկման խորհրդին 13.02.2014թ. ներկայացված բողոքի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով 17.02.2014թ. N 04/032-250 գրությամբ դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, սակայն վերջինիս կողմից պատասխան չի ներկայացվել:

Կենտրոնում 19.02.2014թ. ժամը 16:30-ին կազմակերպված նիստի ընթացքում՝ ԳԲԽ 03/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ քննարկելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Հովհաննես Պետրոսյանի կողմից միջնորդությամբ ներկայացված դատական նիստերով ծանրաբեռնված լինելու և «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներկայությունն ապահովելու հանգամանքներով պայմանավորված նիստը հետաձգելու խնդրանքը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել է 25.02.2014թ-ին:

Կենտրոնում 25.02.2014թ. ժամը 16:30-ին կազմակերպված նիստի ընթացքում ԳԲԽ 03/14 բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե «Սակաբբել» ԲԸ-ի կողմից ի՞նչ արտարժույթով է ներկայացվել գնային առաջարկը, Պատվիրատուի ներկայացուցիչները պատասխանեցին, որ «Սակաբբել» ԲԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է ԱՄՆ դոլարով, սակայն տվյալ դեպքում վերջինիս հայտը մերժելը Մրցույթի գնահատող հանձնաժողովի համար չի կրել պարտադիր բնույթ, ինչով պայմանավորված էլ նշված հայտը չի մերժվել:

ԳԲԽ 03/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից, բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով, Պատվիրատուի ներկայացուցիչներից պահանջվեց ներկայացնել Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով «Սակկաբել» ԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի, Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, ինչպես նաև կարծիք տալ Գնումների բողոքարկման խորհրդին 13.02.2014թ. ներկայացված բողոքի վերաբերյալ, սակայն Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ Մրցույթն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, իսկ 13.02.2014թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից կարծիքը և պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվելու՝ ելնելով կազմակերպության շահերից:

«ՍՊ» ՍՊԸ-ն 26.02.2014թ. Կենտրոնին է ներկայացրել համանման բողոք՝ խնդրելով Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով կասեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Սակկաբել» ԲԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից նույն բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը:

ԳԲԽ 03/14 բողոքը քննող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով, 26.02.2014թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Սակկաբել» ԲԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև ԳԲԽ 03/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացնելը:

«ՍՊ» ՍՊԸ-ն 03.03.2014թ. Կենտրոնին ներկայացված գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների ձեռքբերման նպատակով, 2013թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի հանձնաժողովը գնահատելով «Սակկաբել» ԲԸ-ի կողմից Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը, որը ներկայացված է եղել ԱՄՆ դոլարով, կիրառել է մրցույթի փաստաթղթերում և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի կողմից 2008թ. N 7/08-ՀՄ որոշմամբ հաստատված կանոնադրությամբ չներառված և «ՍՊ» ՍՊԸ-ի համար անհասկանալի բանաձև և «Սակկաբել» ԲԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկի որոշակի բանաձևի

կիրառմամբ զուգորդված գնահատումն իրականացվել է խտրական հիմունքներով՝ ընկերության համար ստեղծելով անհավասար պայմաններ, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի հանձնաժողովի 14.01.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 01 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

- «Սակկաբել» ԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, նաև որակավորման չափանիշները համապատասխանում են մրցույթի հրավերի պահանջներին, որոնք և անցնում են հաջորդ փուլ հետագա քննարկման համար, պայմանով, որ չներկայացված փաստաթղթերը (տեղեկանքներ և վկայագրեր) կներկայացվեն 16.01.2014թ. մինչև ժամը 17:30, հակառակ դեպքում Ընկերությունները, որոնք չեն ներկայացնի փաստաթղթերի ամբողջական փաթեթը չեն անցնի հաջորդ փուլ քննարկման համար,
- «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը կազմում է 291.522.000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն,
- Ելնելով այն հանգամանքից, որ «Սակկաբել» ԲԸ-ն հանդիսանում է ՀՀ ոչ ռեզիդենտ, մասնակից Ընկերությունների առաջարկները հավասարաչափ գնահատելու համար, Հանձնաժողովը որոշեց գործածել հետևյալ բանաձևը «Սակկաբել» ԲԸ-ի գնային առաջարկը պայմանական գնահատելու համար.

«Գնային առաջարկը դրամներով ներառյալ ԱԱՀ-ն հավասար է գնային առաջարկին ԱՄՆ դոլլարով, բազմապատկվում է 408.16 փոխարժեքով 14.01.14թ. դրությամբ, գումարած 20 տոկոս ԱԱՀ-ի համար դրամական միջոցների վարկավորման 1 տոկոս ընդհանուր առաջարկի (վճարման պայմանները 90 բանկային օր) և գումարած մաքսազերծման միջնորդական ծառայությունների 1 տոկոսը և 20 տոկոս ԱԱՀ:».

«Սակկաբել» ԲԸ-ի 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը կազմում է 268.464.594 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

- 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի կողմից 2008թ. N 7/08-ՀՄ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության (այսուհետև՝ Կանոնադրություն)՝

- 4.1.1 կետի համաձայն՝ գնման կազմակերպիչը պարտավոր է ապահովել մասնակիցների Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և նույն կանոնադրությամբ նախատեսված իրավունքների իրականացումը,

- 8.2.2.1 կետի համաձայն՝ մրցութային փաստաթղթերը պետք է պարունակեն մրցույթի բոլոր պահանջներն ու պայմանները, ինչպես նաև դրա բոլոր ընթացակարգերի մանրամասն նկարագրությունը:

- 8.2.2.3 կետի համաձայն՝ մրցութային փաստաթղթերը պետք է պարունակեն՝

գ. մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները և այդ պահանջներին համապատասխանության հաստատման կարգին ներկայացվող պահանջները,

ը. մրցութային հայտի կազմում ներկայացվող փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման վերաբերյալ հրահանգները,

- 8.2.8.6 կետի համաձայն՝ նախընտրական փուլի շրջանակներում գնահատումն իրականացվում է մրցութային փաստաթղթերում նշված չափանիշների և ընթացակարգերի հետ խիստ համապատասխանությամբ,

- 8.2.9.2 կետի համաձայն՝ Մրցույթի կազմակերպիչը իրավասու է մերժել բոլոր մրցութային հայտերը, եթե դրանցից ոչ մեկը չի բավարարում մրցույթի մասնակցի, արտադրանքի, պայմանագրի պայմանների և հայտի ձևակերպման վերաբերյալ պահանջներին:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի մրցութային փաստաթղթերի՝

- 2.4.4 կետի համաձայն՝ մրցութային հայտում ներառված փաստաթղթերում նշված դրամական միջոցների գումարները պետք է արտահայտված լինեն հայկական դրամով, բացառությամբ.

Այն փաստաթղթերը, որոնց բնօրինակները մրցույթի մասնակցին են տրվել երրորդ անձանց կողմից և որոնցում դրամական միջոցների գումարը արտահայտված է այլ արժույթով, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով՝ պայմանով, որ տվյալ փաստաթղթերին կկցվեն մեկնաբանություններ՝ տվյալ գումարները հայկական դրամի փոխարկման մասին՝ ելնելով արժույթի պաշտոնական կուրսից, որը սահմանվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, նշելով նման կուրսը և դրա սահմանման ամսաթիվը, հակառակ դեպքում Պատվիրատուն իրավունք ունի մերժել մրցութային հայտը,

- 2.8.2 կետի համաձայն՝ ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի Մասնակցից պահանջել իրենց Մրցութային հայտերի վերաբերյալ բացատրություններ կամ լրացումներ, այդ թվում բացակայող պարզաբանող փաստաթղթերի ներկայացում: Ընդ որում Մրցութային հանձնաժողովը իրավունք չունի պահանջել բացատրություններ կամ լրացումներ, որոնք փոխում են Մրցութային հայտի էությունը:

Ընտրական փուլի արդյունքներով Մրցութային հանձնաժողովը մերժում է մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված Մրցութային հայտերը, որոնք չեն ներկայացրել նույն մրցութային փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը կամ ներկայացված փաստաթղթերում կան Մրցույթի մասնակցի մասին անարժանահավատ կամ թերի տեղեկություններ:

Գտնում ենք, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը, «Սակկաբել» ԲԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկը գնահատելու նպատակով հրավերով նախապես չսահմանված բանաձև կիրառելով և վերահաշվարկելով հայտով ներկայացված գինը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, քանի որ մրցութային փաստաթղթերը չեն պարունակել որևէ տեղեկատվություն նշված այլ արժույթով գնի ներկայացման դեպքում դրա վերահաշվարկման բանաձևի և դրա կիրառման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է «Սակկաբել» ԲԸ-ի Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով պահանջված որակի համապատասխանության սերտիֆիկատը ժամկետի խախտմամբ ներկայացնելու հանգամանքին, ապա գտնում ենք, Գնումների բողոքարկման խորհրդի պահանջած՝ «Սակկաբել» ԲԸ-ի հայտում առկա փաստաթղթերը Պատվիրատուից կողմից չներկայացնելու և դրանով պայմանավորված բավարար հիմքեր չունենալու պայմաններում, հնարավոր չէ նշված հանգամանքների վերաբերյալ իրավական գնահատական տալ:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կենտրոնի կողմից 13.02.2014թ. և «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2014թ. և 03.03.2014թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքները բավարարել:

2. Դադարեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կարիքների համար մալուխների, հաղորդալարերի, ՍԻՊ-ի համար ամրանների և գործիքների 10 լոտով մատակարարման պայմանագիր կնքելու իրավունքի համար կազմակերպված առանց նախնական ընտրության բաց, միափուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Սակկաբել» ԲԸ-ի հայտը Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատելու որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամներ՝ Հրաչյա Ավետիսյան

Կարապետ Խարբերդյան